

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 15

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

14 ԱՊՐԻԼ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ	Թ. ՈՐԲԵՐԵԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՅ .	ԲԱՅԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
Յանգաւոյ	ՋԷՐ-Ա-ՍԻՄ
Պատրանք	ՎԱՐԴԳԷՍ
ՎԵՐՅՈՒՇՈՒՄ ՄԸ	Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ
ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ	Տ. Ա.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ. Անգլիա, Ֆրանսա, Իտալիա .	Մ. ՆԱԹԱՆԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՆՕԹԵՐ	Ֆ.
ՅՈՒՇԱՏԵՏՐ	

ՀԱՍՅԷ

در علیده غلصده «ماسیس» غزنهسی ادارهسی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասումկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԻՆԳ ՕՐԻՆԱԿ ՄԻԱՅՆ

ՄԱՍԻՍԻ 1900 թաւերջանի ամբողջական հաւաքածոյէն ՀԻՆԳ ՕՐԻՆԱԿ միայն տաւադրելի կը մնայ : Իւրաքանչիւր, 640 երեսներէ բաղկացած եւ Մասթոսեան կազմով գեղեցիկ հասոր մը կը կազմէ : Գնել փափաքողները կրնան դիմել ՄԱՍԻՍԻ խումբագրութեան, Կալաթա, Նորասուկեան խան :

Հրատարակուեցաւ Ս. ԷՔ. Զէօմէքճեանի

Առաջնորդ վաճառականաց օգտաւատ պարտեւականին է. տետրը որ կը բովանդակէ՝ Սվազի եւ Իզմիրի գորգերը . — Քթանի վրայ ծանօթութիւններ . — Դասակարգութիւն Պանքաներու . — Վենետիկեան վաճառականութիւնը, եւայլն : — Նոյնպէս՝ Առեւտրական Բաւարանին շարունակութիւնը :

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վեաք	240.000.000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19.500 000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105.000.000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18.000.000.000 »

ԿԵՆԱՑ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վեաք	99 000.000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000.000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150.000.000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ . կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն» ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼՆԱՐԵԻՆԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐԵԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրութեան ԶերԾ են այն վնասներէն եւ յուսալաքութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des b n fices) ՅՈՒՐԻ եւ ՎԼԱՍՍԱԿԱՐ գրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատուհն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ


ՄԱՍԻՆ

50րդ ՏԱՐԻ

— 14 ԱՊՐԻԼ 1901 —

ԹԻԻ 15

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ



Միջակ, բերրիցս կրկնուած ու բիշ մըն ալ 19րդ դար բուրող խօսք մը պիտի բլլար քսելը թէ Ստեփան Ոսկան այլեւս պատմութեան կը վերադարձնուի։ Օրաթերթերու մէջ տարտղնուած քանի մը կենսագրական նօթեր, որոնք աւելի կ'անշքանային համաշխարհային հրատապ խնդիրներու թարմ լուրերուն մէջտեղ, եւ արդէն մտայնած զէմքերու շարքը կ'անցնէր իր անունը՝ նոր սերունդին համար։ Անխրաւթիւն մըն էր աս, գտնէ զինքը մօտէն ճանչցողներուն համար, ուստի ցաւագին շեղումով մը գրականին նօթերուամ յոր կեանքէն, կու գտնէ պատասխանել Մաւիւրի բարեկամական հրաւերին՝ քանի մը հապճեպ ու պայտի տողերով, իմ կարգիս, իր դամբանական գովեստը հրատելու, ու կը յուսամ որ մէկը պիտի չմեղադրէ զիս ատոր համար։ Շատ շատ, պիտի բռնէ թէ՛

«Գերեզման մը ուրիշ գերեզման մը ողբեց»։

* * *

Բայց թեթեւ հպանցումով մը պիտի բաւականանամ իր հին կեանքին պատմական մասին վրայ, ինծի աւելորդ կը թուի կրկնել իր ծննդեան թուականը ու տեղը, ու մազի շափ չի չաշագրգուեր զիս թէ Բիւլեւ Եռասփիլմիլի ուրիշ մեծ անուն մէկ գաւաղը, եւ նուազ քան փառայի հայրը՝ Մկրտիչ Նուպարեան։ Ստեփան Ոսկանի ուսանողի քայլերը քաջալերած են։ Բաւ է իր նկարագրի բացատրելու համար իրր մեկնակէտ բնորէլ իր ժամանակի Ֆրանսային մտաւորական վիճակը։

Իր ուսանողի կեանքէն վերջի տասը տարիներուն հրապարակագրի կեանքին վախճանը

կ'ըլլայ իր հետացումը Ֆրանսայէ, ինչ որ իրեն նոր հորիզոն մը փնտտելուն անմիջական պատճառը կըլլայ։ Կը միանայ Քալուրի, իրր տան գաւառարակ, իրր օգնական խմբագիր ու գրագիր, եւ որուն գրչին ուժ գնութենէն ահաբեկ՝ մեծ դիւանագէտը կը յանձնարարէ որ մը «Ձեռնաց դնել եւ այնպէս աւելի մեղմ շարժել գրիչը»։ Դէպքերը կը փոխուին, Իզմիրցիք զինքը կը հրաւիրեն գլխաւորներու տեսչութեան գործին, Կեանքին առաջին սխալը, այս տողերը գրողին կարծիքով, այդ հրաւերը բնագոյնի կ'ըլլայ։ Տարի մը չափ կը մնայ տեսուչ ու չի յարմարելով իր ժամանակին, կը քաշուի գործէ։ Ինքը՝ վէճի մարդ՝ տեսչական խաղաղի ու անդորր սեղանին չափաւ յարմարէր բնուէ։ Մանկական միջնորդութեամբ իրր շէր ու շէր կրնար բլլալ։ Դպրոցական միջավայրը նեղ էր իրեն։ Ու ճիշդ միջին դարու նաւագներու պէս, որ ծովերու եւ հովիտի կուրծք տալէ ետքը կ'երթային վանքի մը անդորրութեան մէջ մոռնալու ու մոռցուելու, Ստեփան Ոսկան կը քաշուի իր ցեղէն, ու կերթայ օտարներուն՝ իրենց լեզուով խօսելու ու գաւառական խմբագրի համեստուի օրապահիկը հայթայթելու համար։ Ամիս մը առաջ գնաց հողին մէջ հանգչիլ։ Մեզի համար երեսունընէնք տարի է մեռած էր արդէն։

* * *

Իր տասը տարուան հրապարակագրի կեանքէն աչքիս տողեւ ունիմ հատորիկ մը Արեւելք եւ 10-15 թիւ ալ Արեւմուտք գործ իր եղբայրը հաճեցաւ տրամագրութեանս տակ

դէնէլ : Բաղդէս , վերջին թիւերն են անոնք , որոնց մէջ կը գտնուի իր ձայնին արձագանգ մը չի գտնուին բովանդակ խոստացած տառապանքը : Անշուշտ առաջին տարիներուն աւելի ջղուտ եւ յուսալից ու յուզումնալից եղած է Ոսկան , բայց անկարելի է առանց խորունկ յուզումի կարդալ իր հզօր ու խրոխտ մտածումները , մնայուն կերպով ուղղուած «ոսկեկոփ արձաններու ու իր ժամանակին ոտքին կղերականներուն» դէմ :

Քննադատութիւնը երբեմն երկուքի բաժնած է ինծի համար : Մէկը այն , որ օձի պէս կը սողորսի վարդերու մէջէն , ու կը խայթէ գլխէ եւ երկրորդը ա՛ն որ արծիւի պէս արձակ համարձակ կը ցցէ մագիլները : Ոսկան արծիւ մը եղած է իր քննադատ , բայց աղանձի սրտով արծիւ մը , կամ աւելի ճիշդը՝ ամպը եղած է որ շանթով զարնէլն վերջ արտասուել կը սկսի : Իր գրական գործը Բարիզի մէջ՝ ժամանակակից է Հիւսիսատլանտիկ Մոսկուայի մէջ՝ ու աւերող չէ կարծեմ ըսել թէ խոր մտերմութեան կապով մը կապուած էր ինք Հիւսիսատլանտիկ խմբագրին , ու նոյն սփը կը գործածէր Այն ժամանակները — Իւթիճեան կրնայ ըսել իր յիշատակներէն , — հոյ գրողին կեանքը անտանելի էր : Ամիրտյական անձնասիրութիւններ կային , թեթեւ չունէ մը վիրաւորուելու պատրաստ , կուսքեր որ խնկարկալի կը սիրէին , մարդեր որ Շահնազարեան վարդապետ մը ասեան կը կանչէին : Ու եթէ Պոլսոյ այն ատենուան գրականութիւնը ստիպուած էր ապրելու համար կաղապարի մը մէջ ամփոփուիլ , պղտիկնալ , ինչ որ վերջէն Պարոնեանի մարեցնող ծիծաղներուն անմիջական ծնունդ տուող սկզբնապատճառը եղաւ , Ոսկան , հեռու այդ մթնոլորտէն , կրցաւ , այսօր իսկ նմանը չտեսնող ջղուտ եւ մաքուր աշխարհաբարով մը վիճարանիլ :

Կրօնական ցուալի խնդիրներ մը կը յուշուէին այն ատեն եւ իր հակառակորդները փրկունին ապաստանած՝ աշխատեւր են ամէն կերպով զրոյարտել Ոսկանը , թէ «անհաւատ է» : Բայց կ'երեւայ թէ չէին ճանչնար Ոսկանը որ ամբողջ պէս ցնցուելով ամէնուն բերին շափը կուտար : Գրողի մը դէմ գործածուած այդ

մեթոտը մեր բարքերուն աղտոտ մէկ կողմէն եղած շարունակ : Վկայ բաժին Ջօհրապին Փօստալը որ կարգ մը անձերու ջիւղերն է ցնցեր , լրածիս նայելով , եւ որ ասիթ տուա Բրիգանթէմին՝ իր մէկ սքանչելի յօդուածը գրելու — «Անոնց բարոյականը» — Արեւ. Մանուշի մէջ :

Բայց շարունակուած հակառակութիւններ կը սկսին պղտորել իր մտածումները : Կ'աշխատին կաշառել զինքը : Ընտանեկան ազդեցութիւններ լսանցնել կը փորձեն : Ինքը աննրկուն կը մնայ : Բաժանորդները քիչցնելով՝ կ'աշխատին լռեցնել զինքը եւ իրօք կը յաջողին ալ քիչ մը ատեն : Արեւմտեան նիւթական միջոցներէ զուրկ՝ կը ստիպուի դադարիլ : Բայց Ոսկան իր սկզբունքներուն հաւատարիմ՝ կը գրէ , կը պատրաստէ , գէթ ձեռագիրները պահելու համար , երբ բարբարոս ձեռք մը նորէն տաղադրութեան ծախքը կը հոգայ ու դադարումէն վերջ իր առաջին թիւին մէջ կը հրատարակէ ինչ որ ձեռագիր պատրաստած էր : Այդ գրուածը ծայրէ ծայր հրաշալիք մըն է , յուզումի բոցավառ խոյանք մը , որմէ քանի մը մասեր արտագրելու բաղձանքիս չեմ կրնար զիմադրել :

«Կամքէս լողորովին անկախ պարագաներ ասիթ եղան որ Արեւմտեան երեք ամիս դադրեցաւ : Ուրիշ տեղ եւ ատեն կարելի է որ յիշեմ այս պարագաները , ո՛չ դստովելու միտքով , հապա պատիւս պաշտպանելու համար , պատիւ զոր սուտ անձեր , աւելի սուտ մարդերու վրայ կ'իթնելով համարձակեցան նաեւ օտարազգի անձերու եւ երբեմն անազգի էակներու բերան ձգել :

«Կրնայի՛ , ինծի դէմ եղած այս նոր նախադէպը կլլելով եւ բիւր հրապոյրքէ մոգուած , աշխատութիւնս շարունակել , բայց մեծ խոհեմութիւն չէր այսպէս վարուիլ , երբ հրապոյրքի ներքեւ լարեր կը տեսնուէին զիս որսալու համար :

«Աւելի լաւ սեպեցի , ամէն բան կշռելէ ետեւ , վայրիկ մը կ'անդ առնուլ , չորս դիւ նայիլ , այս լարերը քննել եւ հնար եղածին չափ պատասպարուիլ , քան թէ անզգոյշ քայլով առաջ անցնիլ , ինչպէս երկդիմի ուղեցոյց»

ներ յորդորելէ չէին դադրեր : Քիչ մը դադրեցայ , որ հակառակորդի երեսը նայիմ , քիչ մը հակում ցոյց տուի , որ խաբառ չը խորտակուիմ , եւ ինչ ատեն ամէն բան կատարեցապէս հասկցայ , զիստեք մ'եկաւ վրաս , որ հարկ եղաւ գրիչը թողուլ : Ծանր պարագայ մարդկային կեանքի մէջ , ուր հարկը , քարսիրտ հարկը մեր կամքին ջիղերը կը կտորէ : Ասկէ զատ , պատիւը կը հրամայէր որ կարծուած բարեկամներէ բաժնուէի , պատիւը կը հրամայէր որ անզուսպ բերաններու դէմ լռութիւն պահէի , պատիւը կը հրամայէր որ . . . : Եւ երբ պատիւը կը հրամայէ , այս տողերը գրողը ամէն շահ եւ ակնածութիւն կը մոռնայ , վասնզի իր կեանքէ վե՛ր գրած է միշտ պատիւը :

«Այսպէս մերկ եւ գրեթէ անշնորհք Արեւմուտքս պիտի շարունակուի իր հեռաւոր բաժանորդներուն իղձը կատարելու եւ պատուոյ հաստատարիմ մնացող Հայերէ շնորհակալ ըլլալու համար : Գիտեմ որ շատերը իր այս անշուք կերպարանքին վրայ պիտի ծիծաղին , գիտեմ որ ձեռքի զիրս կոշտութեան ձեւեր ունի , բայց

Ամէն մարդ իր քիթը մեծորտեմեամբ կրնայ ծախել ըսաւ բանաստեղծ մը եւ չեմ' կարծեր որ պատուոյ տէր անձ մը հեղինակեան տալիս սեպէ քիրտով առաջ բերուած սրելոյցէ զոքո՞ր :

«Կամքս հիմա սպասել է , որ ժպտուած բարեկամութեան զիմակը վար տանու կամ ուղղակի դիւ գրգռէ : Վախ չունիմ բնաւ մերկուիլ եւ ճամարտութիւնը պաշտպանելու համար սակեկոյի արձաններու զարնուիլ : Աւելի նեղ պարագաներ անցուցի կեանքիս մէջ :

«Կերելիմ ուրեմն ձեռքի տածեւ զիրովս եւ եթէ գտնեմ ուսումնասէր անձեր , որ իրաւունքը պաշտպանել ուզեն ստութեան դէմ , լա՛ւ եթէ ոչ» , եւ այլն :

«Օր մը պիտի յիշէք կամ ակամայ պիտի յիշել տան թէ այն անհատը , որ բարոյական կորով չունի՝ անբանութեան ո՛րան է : Այս մեծ ճամբարտութիւնը տասը տարիէ ի վեր չե՛մ դադրի կրկնել եւ կը փափաքիմ որ ուշ չի հասկըցուի , վասնզի ամէն սէր կորսնցունելէ ետք կըլլամ թէ սէր մը կայ , որ դեռ բոլորովին չէ մարած սիրտիս մէջ» :

Ու կարգալէ վերջ վերի տողերը , պիտի ուզէք հասկնալ անշուշտ թէ սէրը ի՞նչ դեր խաղաց Ոսկանի կեանքին մէջ : Տառապող սիրոյ պատմութեան եւ արցունքի լայն էջ մը ունեցած է Ոսկան ալ : Նոյն յախտեանական պատմութիւնը : Հարուստի աղջիկ մը , սրուն ծնողքը չեն ուզեր տալ վարժապետ գրագէտի մը : Բուն իսկ Ոսկանէն լրած եմ պատմութիւնը եւ որուն խոստացայ բառ մը չի հանել բերնէս : Այն օրերուն զիս մխիթարելու համար էր որ պատմեց : Եւ ա՛լ Դուրեանին չի հաւատցի այն օրէն :

Երիտասարդ ըլլալ սիրել , ծեր ըլլալ եւ աղօթել :

Չէ՛ , ծերե՛րն ալ կը սիրեն , եւ այդ է կարծեմ բուն եւ իրական օրէնքը : Խորշում այտերէ վար գլորուած կրակոտ յիշատակի արցունք մը , ան ալ իր տեղը ունի մարդկային սրտի բոսոր պատմութեանը մէջ : Ինչպէս վերը ըսի , երեսունհինգ տարի առաջ մեզի համար արդէն անհետացած զէմքի մը ուրուագիծը առնել փորձեցի , մէկ կողմ թողով իր մեկուսացած կեանքը ուսումնասիրել , որ մէկէ աւելի դեղեւումներ , տկարացումներ կրնայ ունեցած ըլլալ : Բայց սա ստոյգ է թէ իր թերթերուն մէջ սրտեց կ'աշխատակցէին Մամուրեան (Վրոյր) , Փրիլմեան եւ շատ ուրիշներ , ինքը առաջին անգամ պաշտպանած է առողջ սկզբունքներ : Մամուրեան Արեւ . Մամուրին մէջ աւելի ընդարձակ եւ ճոխ ու ցաւազին խոյանքով նոյն սկզբունքներուն պաշտպանը եղաւ : Ոսկանի բոլոր գրածները կըրնան լռաբարանել ըսածս : Զուգակշիռ մը ընել Մամուրեանի եւ Ոսկանի միջեւ , չէ՛ նպատակ : Բայց սա ստոյգ է որ ներքին կեանքը ահագին ազդեցութիւն ունեցած է երկու գրողներուն ալ ճակատագրին վրայ ու երկուքին շաւիղները զատուած են իրարմէ սա պարզ պատճառով , որ Աէրը գոնէ ժպտած է Մամուրեանին , մինչ Ստեփան Ոսկանի կեանքը դատարկ ամայութեան մը մէջէն քալած է , պատրուած բարեկամութեանց ու կեանքի բիրտ ու խռտանգիչ դառնութեանց ընդմէջէն : Դաշտափարի տարրերութիւններ չեն երթար չիրմէն անդին , ու երկուքը անշուշտ հանդիպեցան հոն հիմակ , եւ իրարու ձեռք սեղմեցին :

Մօտենալով դրած իս վերջին տողերուն , ջղային ախմայ ցնցումով մը կը շարժի գրիչս :

Երեք տարի առաջ օրաթերթ Մասիսին մէջ «Մտայում Դէմքեր» վերնագրով փորձեցի իր վրայ ուշադրութիւն հրուիրել : Եզրան երկրորդեց փորձս : Աւելի առաջ չի քաշեցի որովհետեւ Ոսկանի հպարտութիւնը վիրաւորած էի անգիտակցաբար , եւ բարեկամներու միջոցաւ սպառնացեր էր դատ բանալ ինծի զէմ՝ իր ներքին կեանքով զբաղելու համար :

Մամուրեանի յորեւանին՝ Գարեգին Բաբազեան անցողակի քանի մը տողերով փափագ կը յայտնէր Ոսկանի ալ յորեւանը կատարելու , եթէ միայն ինքը գար մեզի : Անկէ ետք չեմ յիշեր որ տող մը գրուած ըլլայ :

Գացի քանիցս , բսելու համար իրեն թէ զիտում մը չունէի իրեն համար գրած իս մէջ : Վերջերս բարեկամացանք նորէն :

Անցեալները Իլվիրի ծերունի եւ մշտառոյգ երկու զուակները , Գարեգին Բարազեան ու Գալուստ Մարկոսով հանգանակութեան ելան եւ մօտ քառասուն սակի հաւա-

քեցին : Ոսկան մերժեց ընդունիլ , ինչպէս մինչեւ հիմայ մերժած էր այն դրամները , զորս իր քրտինքով չէր շահած : Մահէն վերջը եկաւ եկեղեցի եւ ինք , որ մինակ քալած էր բոլոր կեանքին մէջ , գոնէ դադարին հետեւող բազմութիւն մը ունեցաւ : Իր աշակերտ-բարեկամը Գէորգ Պուպի խօսեցաւ դամբանական , արցունքոտ ու ցուազին :

Մէկ քանի տարուան մէջ Իլվիրէ մեկնող մեծ ու պատուարեր զէմքերէն ամէնէն զրժարազր եղաւ իր վերջին վայրկեանին Ստեփան Ոսկան :

Գալուստ Կոստան խոհուն ու խոկուն իր զլուխը մօրը կուրծքին վրայ ծռեց , Մամուրեանին աչքերը իր հրեշտակին մատները փակեցին . Ոսկան իր վերջին հառաչը տուաւ պանդոկի մը մենասօր մէկ անկիւնը , ուր ալեւոր իր զլուխը աշխատութեան բարձին վրայ շարժարեց , իր ծննդավայրի հողին մէջ զայն հանգչեցընէէ տառջ :

Ռ. ՈՐՐԵՐԵԱՆ

ՊԱՅՐԱՆԵ

Ծաւի աչերդ ծովուն վրայ կուգան ման,
Ալիքներուն տալով ցոլքեր աներման,
Ու կ'անհետի լուսնական.
Ամպոց ներքեւ պահուրած է ան հիմայ.
Զի կընալով տոկաւ աջացդ սիրահմայ,
Քանի ցոլքեր սանեցան:

Կը սարսրուան տերեւները անտառին,
Երբ տըխրունակ հայուածքներդ անդ յառին.
Եւ երբ շունչդ հոն տիրէ,
Կը դադարի հովն ալ վաղ քե անագան.
Տես, ծառերուն բուշունները սուգ հագան.
Ո՛հ, ամեն ինչ պատիր է...:

Կը ծըփայ սիրտս յուզմունքներու մէջ անգին,
Որոնք վերջէն՝ և հալառակ իմ ջանքին՝
Խօլ սիրոյ մը կը յանգին.
Ըզգացումներս ալ, գիտեմ, են դեռ տրդայ.
Սակայն հոգիս սիրովդ արըշիւ կը դողայ՝
Անգիտ անոր պատրանքին...:

ՎԱՐԴԳԵՍ

ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ազգի մը գրական բոլոր արտադրութիւնները եկեթակայ են շա՛տ մը ազդեցութիւններու : Ամէնէն մեծ եւ ուղղակի ազդեցութիւնը կուգայ միջավայր բառած ամբողջէն : Միջավայրին բարքն ու վարքը , սովորութիւնները , զարգացման աստիճանը , խորհելու զատելու բնդհանուր եղանակը , նոյն իսկ լեզուն՝ իրենց ազդեցութիւնները կ'ընեն գրողին կամ մատենագրողին վրայ : Գրող մարդը ո՛րչափ ալ ուզէ զերծ ըլլալ այդ ազդեցութիւններէն , անկարելի է որ յաջողի բացարձակապէս : Ազդեցութիւններէն զերծ ըլլալու ճիգը կը յաջողի շա՛տ որոշ չափով մը , այսինքն՝ յարաբերական կերպով մը :

Գրողին կամ մատենագրողին դաժնուած միջավայրէն դուրս արտաքին միջավայր մըն ալ կայ , որ իր ազդեցութիւնները կը ներգործէ ազգի մը գրական արտադրութիւններուն վրայ , ինչպէս կը ներգործէ անոր կենցաղավարութեան բոլոր պայմաններուն վրայ :

Մարդկային զանազան միջավայրերուն՝ իրարու վրայ ունեցած ազդեցութիւնները հաւմեմատական են այդ միջավայրերու իրարու հետ ունեցած առաւել կամ նուազ յարաբերութիւններուն : Յո՛րչափ մարդկային բնկերութեան կատուած են անհատները , ցո՛րչափ մարդիկ իրարու հետ չփոխն ու յարաբերութեան մէջ են , միջավայրերու ազդեցութիւնները կը ներգործեն ու պիտի ներգործեն գրականութեան վրայ , եւ այն ամէն արտադրութիւններուն վրայ որոնց ծնունդ կուտայ՝ ըլլա՛յ գրիչը , ըլլա՛յ վրձինը , ըլլա՛յ գրօրը , ըլլա՛յ կարիկը :

Գիտեցէ՛ք նոյն իսկ իրարու վրայ շատ քիչ ազդեցութիւն ունեցող երկու հեռուոր միջավայրեր , Հայու մը միջավայրը եւ Գերմանիան : Ենթադրեցէ՛ք որ այս Հայր ուսած է գերմաներէն լեզուն , կը հասկնայ այդ լեզունով գրուածները ու կը կարդայ , զոր օրինակ ,

կէօթէ կամ Շիլլէր . չէ՞ք կարծեր որ այս Հայր գրական բան մը արտադրել ուզած ատենը իր կրած ազդեցութիւնները չմատնէ : Այսպէս՝ օրուան նորութիւններէն օրինակ մը տալու համար բռնեք . «Վազուան գրականութեան» մը ՏԵՍԱՆՈՂՆԵՐԻ պիտի կրնա՞ն այդ ազդեցութիւններէն զերծ մնալ : Գաւառացի գրող՝ Բացատրութիւնը տարօրինակ չէ՞ «զուտ գաւառացիական արտադրութիւններ գրողներ» հասկցնելու համար : Ո՞վ ըստ որ՝ օրինակի համար՝ Արտաշէս Յարութիւնեանը ֆրանսերէնով կազմուած շինուած գրող մը չէ : Գաւառէն գրող այս երիտասարդը , միշտ իր դարձուածու որ եւ քիչ մը միջին ոճով յաջող է եւ ո՛չ թէ իր գաւառական արտադրութիւններով , եւ ո՛չ ալ , անշուշտ , իր «Վազուան գրականութիւն» ըսած հայեցողութեամբ :

Նոյն իսկ ա՛յն նիւթերը , որոնց մէջ մենք զուտ հայացի բաներ մը կը տեսնենք՝ զոր օրինակ գրողները , առասպելները , շա՛տ ազդեցու համար հասարակաց են ատոնք , եթէ ոչ նկարագրապէս՝ գոնէ հիմամբ : Հաւաքոյն օրինակը տալու համար , մեր հին մատենագրութիւններէն շատեր Ս. Գիրքի հետեւած են : Կառննկազիւրջը Մովսէս մարգարէի օրէնագիտական միտքերուն ու ըմբռնումներուն դասական ու տարրական շատ բան կը պարտի :

Լեզուն՝ ամէնէն աւելի իր ինքնութիւնը պահելու համար ամէն յարմարութիւն ունենալով իսկ՝ զերծ չէ՛ կրցած ըլլալ միջավայրի ազդեցութիւններէ : Մշտ գաւառին հայերէնները ըսած ատենդ՝ կը զգաս շեշտեր մը , արտատառութեան ձեւ մը , որոնք օտար լեզուի յատուկ են :

Ազդեցութիւնները բաւ ըմբռնելու համար զիտեցէ՛ք նկարչութիւնն ալ : Ես գաւառնեալու մէջ յատուկ գիտողութեան առարկայ ըսած էի մեր եկեղեցիներուն մէջ գրուած պատ-

կերներու նոյնութիւնները, նմանութիւնները ու աննմանութիւնները : Տիրամօր պատկերները, միայն զգեստի տեսակէտէն, կանացի զգեստներու մեծ զանազանութիւն մը կը ներկայացնեն : Վրձին գործածող վարպետը իր գաւառէն չա՛տ բաներ կ'անցընէ իր նկարին մէջ : Հրեշտակներու պատկերներուն մէջ զատ խումբ մը գտած էի Ճանիկի Առաջնորդութեան եկեղեցիներուն մէջ : Այդ պատկերները կամ իզգանկարները ելած էին Անատոլոցի (Ամասիայէն կամ Մարգուտնէն) նկարչի մը վրձինէն որ բոլոր հրեշտակներուն ալ հմ. քաւի կամ զուպուն հագցուցեր էր : Այդպիսի ազդեցութիւններու չէ՞ք պատահած զանազան նկարներու մէջ որ արեւմտեան վարպետներու ձեռքէն ելած են : Երբեք տեսած չէ՞ք եւրոպական գլխարկով կամ զգեստով Առաքեալներու պատկերներ : Հիմայ որ այդպիսի պատկերներու արտագրութեան համար հնախօսական ընդարձակ ուսումնասիրութիւններ կ'ըլլան, ճշմարիտ առհաւուրթիւն մը, միշտ հինը իր հնութեան տիպովը մարմնացնելու դրութիւն մը կայ, այո՛ւ. այս պարագային իսկ ուսումնասիրողներ իրենց միջավայրերէն բաւական բաներ կը փոխանցեն իրենց վրձինով :

Ամէնէն նոր Տիրամօր պատկեր մը գրուած է Բերայի Ս. Յարութիւն եկեղեցին, զիտեցէք եւ պիտի տեսնէք որ չա՛տ սիրուն բաներ փոխանցեր է նկարիչը այդ պատկերին մէջ :

Բաբերդի գիւղերէն մէկուն գերեզմանոցին մէջ զիտեցի որ խոյակերպ տապանաքարեր կային. մանաւանդ զոյգ մը կար դեռ նոր կտրուած. կարծեմ՝ զոյգ մը հովիւ եղբայրներու գերեզմաններն էին : Խաչարած միջավայրի ազդեցութիւնը :

Ամերիկեան նշանաւոր գրող Էմէրսոն՝ իր բաւարբ դիտած էր որ Գոթական ճարտարապետութեան նախատիպը անտառները եղած են : Չեմ յիշեր որ իր իսկ յիշած անտառին անունը դէ՛էի հոս :

Պատկերասրահական, ճարտարապետական այս գիտողութիւններու մէջ չա՛տ կարկառուն

չէ՞ր գտնէր միջավայրերու ազդեցութիւնները :

Եւ անշուշտ չէ՞ք կարծեր որ այս իրողութիւնները տարրեր ըլլան գրականութեան մէջ ալ :

Բայց այս բոլոր գիտողութիւններուն մէջ ստոյգ է որ ամէնէն ազդեցիկ միջավայրերը անոնք են, որոնց մէջ կամ որոնց շատ մօտ կը գտնուին արտագրողները :

Գրականութեան մէջ՝ մեր գրողներուն վրայ խօսելով՝ խոհապէս չա՛տ մը ազդեցութիւններ կան : Ամէնէն առաջ, գրողին մտաւոր զարգացումը. մեր բոլոր գրողները իրենց մեծամասնութեան մէջ ֆրանսերէնով լ'ուած գրիչներ են : Եւ «նորավէպ»ի դրութիւնն ալ ֆրանսերէնէ ներմուծուած չէ՞ մեր արդի գրականութեան մէջ : Անգլիերէնով ալ զարգացածներ կան. Ամերիկեան հաստատութիւններէն յառաջ եկած բոլոր Հայերը՝ մանաւանդ մեր բողոքական ազգայինները՝ անգլիերէն կը բուրեն՝ նոյն իսկ իրենց հայերէն արտասանութիւններուն մէջ : Անտարակոյս՝ ակնարկ մըն ալ կ'ովկասի վրայ նետելով՝ Ռուսահայ գրականութեան մէջ զիտած էք չա՛տ մը ոտսարանութիւններ եւ գերմանական կոտորտութիւններ :

Իրաց այս վիճակին մէջ, որ փոխուելու համար մասնաւոր ճիգերու չի նաւառնիր, այսօրուան գրականութիւնը «վաղուան գրականութիւն» է, եւ վաղուանն ալ կ'սրտմոռնի մեր գրող սերունդը պատրաստելու պայմաններէն :

Հարկ չկայ լսելու որ մենք ուղղակի «վաղուան գրականութիւնը» ըստած միտքի մը թեր ու դէմ՝ արտայայտութիւններուն նկատմամբ բան մը լսելու համար չենք գրեր այս տողերը : Մերինը րնդհանուր գիտողութիւններ են եւ այդ գիտողութիւնները կը շեշտեն իրողութիւն մը, միջավայրերէ եկած ազդեցութիւններու իրողութիւնը, որ իր ալազան եղանակներովը կը տիրէ մարդկային բոլոր գեղարուեստական արտագրութիւններուն վրայ :

ԲԱԲԵՐԴԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Յ Ա Ն Գ Ա Մ Ո Ն



Աղջիկ ալ վա՛ր ձրգէ ձեռքէդ կարդ ասուէ ,
Քանի հոգիս հոգւոյդ համար կ'արսասուէ :
Սիրքս ո՛րչափ բաղձանքներու յուսացաւ
Ես անոնցմէ ըզգացի միշտ հուսա՛՛ ցաւ :
Ո՛րչափ հոգե՛ր ու մըսմըսով ըզբաղ ցանգ
Ես ունեցայ իմ կեանքին մէջ զերդ բաղձանք .
Տառապանքի պէս իմ մէջը կա՛ր ասի ,
Նրբ իմ մարմինս եղաւ անպէտ կարասի :
Դժբաղդ մ'ըլլալս ես ըզգացի ա՛ն օրէն ,
Նրբ սրտիդ մէջ տեսայ կրքերդ անօրէն ,
Նրբ երկու խաժ աշուրներովդ ասղեծիր
Սիրս ու հոգիս ու ամբողջ զիս ասղեցիր :


Աչերս անու՛՛ նրման գարնան փեսային
Ի գո՛ւր վրադ զըզուտ ժպտի պէս հային ,
Բայց ալ հեռուն , հեռո՛ւն պողպատ ա՛յս ի ծով
Կ'որոնեն իմ յոյսը վերջին քալսիծով ,
Քու ըստմբակ նայուածքներդ փոխարեն
Որոնք հոգիս կ'երեն անդուլ կը խարեն :
Եւ իմ հոգիս որ տառագոյն կը փայլի
Փոխան դեմքիդ ընտրեց հիմա իբր հայլի
Ջինջ վարագոյրն երկնից կապոյտ երեսին
Որ չի՛ մարիր խոստումիդ պէս չոր եւ սին :

Հո՛ն են հոգւոյս կաթիլները զըւարթուն
Այդ յոյսերուն մէջ , որ վառին միշտ արթուն
Եւ կրքերուդ տեղ որ ջիւղերս յապաւեն
Հիմա կ'ընտրեմ զանոնք սիրոյս ապաւեն :
Ալ ինձ համար նայուածքներդ կոր ու սին
Նենգ հրապոյրին ժրպիտները կորուսին .
Եւ սիրդ՝ որ ցանգ կ'երկներ մեռնող փու յոյսեր ,
Դեղդ՝ որ այլոց որոգայթներ կը հիւսեր ,
Հրաշունջ լեզուիդ զաւակ մարմնող փոյլ բոցեր ,
Եւ փու պչրանքդ՝ որ մարդուս սիրք խոցեր ,
Ա՛յ անցեալինն են , հիմա դո՛ւն ա՛րբ յաւեւ
Ձղջման գաւաթն , օրերէդ վերջ արփաւեւ :

Կ'ասեմ ես փու դրժող հոգիդ , սիրդ որ ցանգ
Տնցուց իմ մէջս հիւծող ցաւեր ու վորձանք :

ՋԷՐ—Ս.—ՍԻՄ

Վ Ե Ր Յ Ո Ւ Շ Ո Ւ Մ Մ Ը



ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՍ

Կը մտածեմ որ հոգեբանական տեսակէ-
տով առաջին գրութիւն մը քան առաջին հրա-
տարակութիւնն աւելի կարեւոր է : Մանա-
ւանդ ինձ համար այսպէս եղաւ : Մօրս զոյգ
գիրքերը , զոյգ թռչնիկներու պէս բաներ,
փոքր հատորիկներ՝ նստած սենեակինս միշտ
բարձին վրայ էին , երբ այն պաշտելի կնոջը
ձեռքը չէին : Այդ գիրքերն Ազոթագիրք մը
ու Սաղմոսն էին : Շատ կը սիրէի կարդալ
Սաղմոսը . եւ ամէն մէկ բանալու Սաղմոսը՝
մարդարէին ձեռքի քնարը կը գիտէի յախշ-
տակութեան ու ցանկութեան խոնարհութեամբ
աչաց : Իրիկուն մը , իրր երկնային ժայռէ մը
չիթ առ չիթ լեցուած ըմպանակի մը պէս՝ որ
հուսկ ապա կը զեղու , մատաղ սաղմոսայագ
հոգեակս արտայայտութեան պէտքն զգաց :
Վաղամեծիկ կրտսեր եղբայրս՝ Պօղոսիկը՝ նըս-
տած էր մօտս . մայրս գուլպայ կը հիւսէր ու
հայրս կը նկարէր . թուղթ գրիչ տուի Պօղո-
սիկին ու «գրէ՛» ըսի : Երկու լայն կշեր լեց-
ուեցան , առանց բառ մը տեղեկելու , առանց
բառ մը պակսեցնելու՝ հակառակ Պառլեյի
պատուէրին : Արտագրութեամբ քարոզ մըն էր ,
կամ մանաւանդ ինչ որ կրնայ կոչուիլ կրօնա-
կան խօսքեր : Տանըջորս տարեկան էի : Ու
հաւատացէք որ լաւագոյն գրածս էր այդ
կրօնական մանկական կշը : Հայերէնի դասա-
տունիս գաւառացի մըն էր այն ժամանակ ,
որուն անունը գիտէի երէկ՝ բայց այժմ չեմ
յիշեր , յիշողութեան հիւանդութեամբ մը որ
կը պատահի՝ ըստ Ռիպօի՝ շատերու : Այդ
պատուական դասատուն թափանցիչ արտա-
սանութեամբ մը մեզ Ոսկեդարու մատենա-
գիրները կը կարդար՝ քերականութեան դա-
սէն յետոյ :

Երկու տարի ետքը շարագրութիւն սկի-
սանք : Իսկ առաջին հրատարակութիւնս ան-
կից ալ երկու տարի ետքն է : 1868ին Աղա-
թօն Գրիգոր էֆէնտիի մահուան առթիւ գրած

նոտանաւորս էր՝ զոր Մասիս օրաթերթին հրա-
տարակութեան զրկեցի : Գրարար էր այդ ո-
տանաւորը , զոր դատատունիս՝ Թորոս Նազար-
եան սրբագրեց , ոչ թէ լեզուն , որովհետեւ նա-
խորդ հայկարանութեան ուսուցիչնիս՝ Մատա-
թիա Գարագաչեան՝ իմ ու քանի մը ընկերնե-
րուս գրարար գրութեանց տակ այլ եւս անսխալ
կը գնէր վերջերս . այլ սրբագրեց գրութիւնը .
քանի մը տեղ ամական ու քանի մը տեղ բա-
յեր փոխեց , եւ այս սրբագրութիւններով
նոտանաւորին ռաբերը կտորեց ու յանգերը
ջնջեց . վերջին տողն ալ բոլորովին փոխեց :
Եղբերեզս անշուշտ աւելի կատարեալ եղաւ ,
բայց աչքիս կող սատանայի պէս բան մը
երեւցաւ , բարկութենէս լացի , եւ Տնօրէն
Սիմէոն Միքայէլեանին յորդորանայր վրայ
միայն հաւանեցայ յանձնել հրատարակու-
թեան : Իր ինքնարուզիս միամիտ բացատրու-
թեանը մէջ , նոտանաւոր թէ՛ յանգատը , ա-
ռայ սրագրութեան աւելի արմէք պիտի ու-
նենար այդ եղբերեզս՝ բաւական տալիս :

Իսկ արձակ առաջին հրատարակութիւնս
(չիտակը խօսելով՝ ճիշդ չեմ յիշեր թէ ոտա-
նաւոր գրութիւնս առաջ լոյս տեսաւ եթէ ոչ
արձակս) Յովսէփ Բոլաթի Հարսանիքին նամակ-
նախարանն է : Զարմանալի չէ՞ , ես համբակ
մը , զպոսպական մը , հեղինակ մը կը ներ-
կայացնէի հրատարակութեան , մինչդեռ յեւ-
րպա՝ արդէն մեծահամբաւ հեղինակներն են
որոնք նորեկ մը կը ներկայացնեն նամակ-
նախարանով մը : Բայց ի՞նչ ընեմ . Բարիգի
Մուրատեան վարժարանին աշակերտ՝ Բոլաթ,
որ Նոպարեան վարժարանը գաղղիիւրէնի
օգնական-ուսուցիչ էր , Հարսանիքին ձեռա-
գիրը տուաւ ինծի կարդալու . տուն գացի ,
պարտէզ լջայ , կարդացի . ներս գալուս՝
ճաշարանը կողմաւոր գրիչ ու թուղթ տեսնե-
լով , Հարսանիքին վրայ ապաւորութիւնս
գրեցի՝ որպէս թէ սեղանին վրայ գտնուած

գաւաթ մը քուրը պիտի խմէի : Հետեւեալ
օրն աւճաւոր տառի հեղինակին՝ գործըք : Օր
մըն ալ Բոլատ իր վէպը տպուած չը բերէ՞
ձեռքս տայ , նամակս սկիզբը գրուած : Այն
ժամանակ արդէն Ռըվիւ *ske sko* Մօնէ կը
կարդայի : Գրութեանս շատ չը հաւնեցայ :
բայց գրածս գրքի մէջ տպուած տեսնելուս
ուրախութեան բազմապիսի ուրախութիւն մը
գեռ մինչեւ ցայսօր ունեցած չեմ : Եւ . . .
գրութեանս հաւնուեր էր . — որո՞ւն կողմէ . —
Վենետիկցիի մը կողմէ : Թորաքետորդիքս ,
վաղամեօիկ Ներսէսեան եղբարք , օր մը տուն
եկան զիս իրենց տանելու , յայտարարելով
թէ Նորայր Բիւզանդացին՝ իրենց խնամա-
կալը՝ « երկաթէ քաղաքի մը ոսկի դուռը »
կ'անուանէ Հալուսիի յառաջարանս եւ զիս
տեսնել կը փափագի կոր անձկաւ : Բազմա
վիպի նախնին խմբագրողեալ գովեստ կար
դաց ինծի սիրելի Թորաքորջս քով որ գտու-
ղութիւն կը զգար : Խօսեցաւ բառարանին
վրայ զոր կը պատրաստէր : Իսկ իմ մտքէս
կ'անցնէր որ ես ալ բառարան պիտի շինէի ու
հայ լեզուն տասը հազար բառով օր մը պիտի

օժտէի : Բայց ամէն բան չորջո զիս կը յոր-
գորէր գրող բլլալ : Եւ ներքին դրդմամբ ար-
դէն որոշեցի գրող բլլալ ա՛յն օրն , ուր՝ տա-
կաւին շարագրութեան գասի չը սկսած՝ տեղ
մը Տեմիւր-Աղաչեան մը գտայ տպուած , ու-
րիշ տեղ մըն ալ Եղիա եւ զոյգ անունները
կցելով զեռեղեցի Գարագաշեանի Տրաւաքա-
նուքեան սկիզբը , հեղինակին անունին հան-
դիպակաց կողմը : Գրող եղայ , այո՛ , այսինքն
տառապո՛ղ : Գրող եղայ , որպէս զի չը կար-
գամ ու չը գրեմ աւիտ'ջմ տարիներ :

Հիմայ դո՛ւ եղա՞ք դուք որ , ազնիւ երի-
տասարդներ , պատիւ կ'ընէիք ինձ ինչ խնդրե-
լու որ յայտնեմ թէ ի՞նչպէս սկսած եմ գրել :

ԵՂԻԱ ՏԵՄԻՐ-ԱՂԱՇԵԱՆ

Ընկերային իմաստասիրութեանս միւս մա-
սերը կը յետաձգեմ : Կրթական վիճակնուս
վրայ գրելու համար՝ գրիչս առաջ չը դնայ :
Մեր գրականութիւնն ալ ո՞չ ապաքէն գրեթէ
կայուն վիճակ մը ունի :

Ե. Տ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

.....

ԱՆԳԼԻԱ, ՖՐԱՆՍԱ, ԻՏԱԼԻԱ

Ինչ կուգին թող ըսեն Անգլիոյ հակաիր
գրիչներ եւ լեզուներ — որոնք այնքան շատ
են՝ որքան անոր շատերուն նախանձելի բլ-
լլը կ'ապրոցոյցանեն : Անգլիա Թրանսվալեան
ներկայ պատերազմով այնպիսի իրողութիւն
մը երեւան բերաւ որ բովանդակ տիեզերա-
կան պատմութեան մէջ իր նախընթացը չու-
նի , այն է փոխադրել կարենալ այդ քան հե-
ռաւոր ծովիւրէ այնքան ահագին բազմութիւն
մը մարդոց եւ կենդանեաց՝ իրենց ուտեստ-
ներով եւ բոլոր կազմածներով : Պատերազ-
մական տարեգրութեանց մէջ կան յիշուած
արգարեւ աւելի ահաւոր արշաւաւորներ ,
մարդերու եւ կենդանիներու աւելի մեծ հո-
սանքներ որ աշխարհէ աշխարհ ողորմած են ,

բայց անոնք ցամաքային արշաւանքներ ե-
ղած են որոնք մեծ մասով ուտեստին եւ
պէտքերին կը հայթայթէին իրենց անցած
տեղերէն եւ գրաւած երկիրներէն : Իսկ ծու-
վային ոչ մէկ արշաւանք կրնայ նմանիլ այս
անգլիական ներկայ պատերազմին որ կը
մշտի այնքան հեռաւոր երկրի մը մէջ , Հին
գարերու ծովային ամենամեծ Տէրութիւնը ,
Կարգեզոն , որ Քրիստոսէ առաջ երեք դար
Միջերկրականի բացարձակ տէրը եղած էր ,
Սիկիլիա կղզին տիրելու համար ահագին
զօրութիւն եւ պիժ գործածեց թէպէտ , եւ
հին պատմիչներէն ըսողներ կան թէ մինչեւ
200 հազար զօրքի ճակատ հանեց , բայց նախ
երկրայեկի է այդ թիւին ճշգրտութիւնը , երկ-

րորդ, եթէ ստոյգ ըլլայ իսկ, նորէն մեծ
բան մը չէ բաղդատմամբ անգլիական ներ-
կայ արշաւանքին, զի մինչդեռ Կարգեղոս
եւ Սիկիրիա դէմ առ դէմ են եւ պարզ աչքով
անգամ կրնան զիրար նշմարել ծովեզերքներէ
փոխադարձաբար, Մեծն Բրիտանիայէն հա-
րաւային Ափրիկէ 6000 մղոնէն պակաս չէ,
Բաց աստի, Սիկիրիա այնչափ ճոխ, հարուստ
եւ բազմամարդ կղզի մըն էր որ կրնար լիովի
պաշար հայթայթել արշաւող բանակին,
մինչդեռ գիտենք թէ անգլիական արշա-
ւող բանակը ստիպուած է իր հետ տանիլ
կամ ետեւէն հասցնել իր ամէն պէտքերը,
իսկ երբ ի նկատ առնենք Պօէրնեբուռն ան-
թինակ, անսպասելի եւ անտեղիտալի քա-
ջութիւնը, կորովը եւ ուղղագիտութիւնը,
որ շատ բարձր են նախկին Սիկիրիացոց
ունեցածէն, այն տոնն իրաւամբ կրնայ
ըսուիլ թէ Անգլիոյ մղած այս պատե-
րաւմը կամ արշաւանքը առաջինն է բոլոր
պատմութեան մէջ եւ անոր չեն նմանիր ոչ
նոյն ինքն Անգլիոյ տակէ առաջ բրած բոլոր
պատերազմները եւ ոչ ուրիշ որեւէ մէկ ազգի
անոր կամ արիւնջի դէմ մղած կռիւները, մին-
չեւ անգամ ի կշիռ չեն կրնար դրուիլ այս
արշաւանքին հետ Հռոմայեցոց եւ Կարգե-
ղոսացոց իրարու դէմ իբր 50 տարի մղած
Փիւնիկեան անունով աշխարհահռչակ պատե-
րազմները (Գ. եւ Բ. դար Քրիստոսէ առաջ)
զի թէ՛ իրարու շատ մօտիկ էին, թէ՛ պատե-
րազմին կարեւոր մասը ցամաքի վրայ տեղի
կ'ունենար եւ թէ՛ ոչ մէկ կամ միւս կողմէն
այդչափ զօրք (250 հազարի չափ) մէկ ան-
գամէն զէնքի տակ ոտքի վրայ չէր կենար
պատերազմական ծառայութեանց համար,
ինչպէս կ'ըլլայ հիմա Անգլիացոց կողմէ:

Իսկ թէ Հարաւային-Ափրիկէ կամ Թրանս-
վալ եւ Օրանժ կ'արժեն այդչափ զոհողու-
թիւն, աստիկա Անգլիացոց գիտնալու բանն
է, Մեզ, օտարներուս, ուրիշ բան չմնար ը-
նել, բայց եթէ նշանակել իրողութիւնները
միայն եւ յիշել թէ 151 միլիոն անգլ. ոսկի
արդէն ծախք եղած է, ինչպէս ըսաւ Անգ-
լիոյ երմտական նախարար Սըր Մայքլ Հիքս
Պիչ իտրհրդարանին մէջ, յարելով թէ այդ
գումարը իմրիմի պատերազմին ծախքին կրկին

է, եւ մեծն Նարդէնի դէմ մղուած 1813/
եւ 1814/ի պատերազմներէն իսկ աւելի, քան
որ այդ վերջնոյն ծախքը 144 միլիոն եւ 180
հազար ոսկի էր միայն, Պէտք չէ սակայն սա-
ալ մոռնալ թէ Թրանսվալ եւ Օրանժ որոնց
համար այսքան անբաղդատելի զոհողութիւն
կ'ըլլայ, աւելի ընդարձակ են երկուքը միա-
սին քան Ֆրանսայի ու Անգլիոյ միացեալ
ապարժութիւնը, — բայց թէ բնակչաց թիւը
անհունապէս նուազ է, այդ հոգ չէ, զի դրա-
կան արդի դարուս մէջ՝ հող, հանք, մետաղ,
վերջապէս նիւթական հարստութիւնը աւելի
արժէք ունի քան մարդը, որուն պակասը շու-
տով կը լեցուի՝ երբ ապահովութիւն կենայ
թէ այդ բաները գոյութիւն ունին, եւ ստոյգ
է թէ Պօէրնեբուռն հայրենիքը լիովի կը պա-
րունակէ զանոնք:

§ Թրանսվալեան խնդրէն ետքը կարե-
ւորութեան կարգաւ Չինը կու գոյ ապաքէն,
բայց այնքան չիօթ ու կնճռոտ է կացութիւնը
անոր մէջ, որ աւելորդ է խօսիլ վրան:

Իսկ Իտալիոյ նաւատորմին այցելութիւնն ի
Թուրքն եւ ընդհանրապէս Իտալացոց մերձե-
ցումը դէպ ի Ֆրանսա, մինչեւ իսկ կարծել
տալու չափ թէ երբեակ զինակցութիւնը պիտի
կորսնցնէ հաւանորէն իր կրտսերագոյն անդամը
(Իտալիա) որ պիտի աւելնայ երկեակին վրայ,
քաղաքական կարեւոր երեւոյթներ են արդա-
րեւ, բայց բնաւ հաւանական չէ որ կարենան
ենթադրութեան սահմանէն ելել եւ իրականու-
թեան աշխարհը մտնել այն դերազանց պատ-
ճառաւ որ 1. Պապը դեռ համակերպած չէ 1870էն
ի վեր իրեն վիճակուած ճակատագրին եւ
չդադրիր խողոքելէ եւ Պեպինոս թագաւորին
ու Կարոլոս մեծն կայսեր (Ը. դար) իրեն շնոր-
հած աշխարհային իշխանութիւնը պահանջելէ
Հռոմ մայրաքաղաքով, 2. Բոլոր կաթոլիկ ազ-
գերէն աւելի Ֆրանսայի վրայ դրած է Պապը
իր այդ ակնկալութեան ապագայ պահումը,
թէպէտեւ ամէնէն աւելի Ֆրանսա վարակ-
ուած ըլլայ սկեպտիկութեան շունչով, բայց
եւ ամէնէն աւելի Ֆրանսա է որ տրամադա-
պէս իրարու հակառակ եւ հակոտնեայ քա-
ղաքականութիւններ կրնայ ունենալ անակըն-
կալ եւ յանկարծական փոփոխութիւններով,
ինչպէս մէկ դարէ ի վեր կը տեսնուի այն-

քան յաճախ, եւ «Բանտարանութեան» ու «Առա-
ռածամարդասիրաց» անունով կրօնքներ հաս-
տատելէ ետք այդ Ֆրանսան էր որ նորէն
կաթոլիկութիւնը պետական կրօնք բրաւ եւ
Քանքորտան հաստատեց : Ուստի կրնայ ըլլալ
որ նորէն յետագարձ խաղաղք մը ընէ եւ
ընտրէ այնպիսի երեսփոխաններ որոնք հի-
մակառնին բոլորովին հակառակ քաղաքա-
կանութիւն մը բռնեն եւ մղեն Ֆրանսան տար-
բեր այնպիսի ուղղութեան մը որ միտի Պա-
պին վերագարծնել իր նախկին մայրաքա-
ղաքը, եթէ Իտալիա զաշնակից չգտնուի Գեր-

մանիոյ եւ Աւստրիոյ : Այս տեսութիւններով
ահա անկարելի կ'երեւայ որ իրականան Իտա-
լիոյ Ֆրանսայի հետ զաշնակցելու, այսինքն
Գերմանիոյ հետ աւրուելու կարծեցեալ են-
թադրութիւնները, զի մանաւանդ Ֆրանսայի
հետ գործնականապէս բարեկամանալը կը
նշանակէ նաեւ Անգլիոյ հետ զրականապէս
թշնամանալ, ինչ որ Իտալիոյ գործին երբեք
չկրնար զալ : Ուստի Թալոնի ցոյցերը ցոյց
պիտի մնան եւ ոչ ոք ի Պիլլիւն կամ ի Վիեն-
նա կորսնցոյց իր քուեր սնունդ աղմուկէն :

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. — «ԾՌԱԶԱՏԱԿԻՆ» — ԱՅԱՐԱՋԱՐԻ ԳՕՆՍԷՌԸ —
ՆՈՐ ՅՈՐՏԷԱՆԻ ՄԸ ԳԱՂԱՓԱՐԸ :



Հարուստ ու երջանիկ կալուածատիրոջ մը
պէս որ իր ստացուածքները տալահովազրելու
համար երկար քանակութիւններ կը կատարէ,
յուրօրէն ընկողմանած հանգստաւէտ թիկնա-
թոտին մէջ, իր ծխափողը քաշելով հանգար-
ափէ, մեր Ուսումնական Խորհուրդն ալ, չա-
բախներէ ի վեր, զոյգ զոյգ «յատեան կը հրա-
ւիրէ» կեանքի ապահովագրութեան բոլոր ըն-
կերութեանց գործակալները, նոյն իսկ անոնք
որ... ինքզինքնին միայն կը ներկայացնեն,
ուսուցիչներու հանգստեան Մատուկի մը հա-
տաւան պարզ ծրագրին հետ լծուողու հա-
մար ուսուցիչներուն կեանքը ապահովագրելու
մանուածապատ գաղափարը : Թէեւ, կրնայ
մտածուիլ, կրթական գործին աւելի գիտա-
կից ըմբռնում մը ցոյց առած պիտի ըլլային՝
ուսուցիչներու ամսաթոշակներուն կանոնաւոր
վճարման եղանակ մը ապահովելով նախ,
քան թէ անոնց մեծնելէն ետքի տրուելիք
գումարին ու սակագոյցին վրայ վիճարա-
նելով : Անցնինք սակայն :

Վերը յիշուած ծրագրիներուն երկրորդ
եթէ բոլորովին նոր չէ՝ գէթ առաջինին չափ
հին ալ չէ : Ասոր նախահայրը, գիտենք ա-

մէնքս ալ, որ Պէրպէրեան Ռէթէոս Էֆէնտին
է որուն անունը écarter կ'ըլլուի — կը փոփան
չարամիտներ — այն համոզումով, թէ որքան
աւելի ուշ եւ այլափոխուած ձեւի մը տակ
երեւան հանուի հանգստեան Մատուկի մը հա-
տաւան ծրագիրը, այնչափ աւելի նորութեան
մը պատրանքը պիտի տայ անկաւ : Գալով երկ-
րորդին գէթ իմ յոգնած մաքիս տարտամ վեր-
յուշումներուն նայելով, անոր paternitéն ալ
կը պատկանի ապահովագրական մեծ ընկերու-
թեան մը կեանքի ճիւղին երրեմի գործա-
կալին որ իրր երեք տարի առաջ Արեւելի
խմբագրութեան բերաւ յօգուածաձեւ առա-
ջարկ մը՝ հայ վարժապետներուն կեանքը
ապահովագրելու մտքով : Այդ թուականին,
— ինչպէս անկէ տասը տարի առաջ կ'ըլլար՝
եւ ինչպէս հաւանաբար ասկէ տասը տարի
եւ քննալ ալ պիտի ըլլայ, — ուսուցիչներու
հանգստեան Մատուկի մը հաստատման
ծրագիրը «օրուան հրատապ նորութիւնն էր»
մեր լրագրութեան համար : Բայց որովհետեւ
խմբագիր մը Ուսումն. Խորհուրդի անդամի մը
սրատեսութիւնը ու փութկոտութիւնը չի
կրնար ունենալ, նոյն իսկ եթէ Ուսումն.

Խորհուրդի ապագայ անդամակցութեան նա խառնամանակ երջանիկ արարած մը ըլլայ, յօդուածածեւ ծրագիրը գնաց կորսուեցաւ ու տանաւորներու գէգի մը մէջ։ Միայն թէ, ձեռագիրներն ալ իրենց ճակատագիրը ունին, բաղդաւոր կամ անբաղդ, եւ մինչ ոտանաւորները՝ աստիճանական անկումով մը՝ անկիւնի նախալուծաւորին կրակը կ'երթային այլապէս օգտակար ըլլալու համար մարդկութեան ազգատիկ մասին, արձակը — «ապահովագրուած արձակ մը»՝ իր նիւթին յարմար բացատրութիւն մը գործածելու համար — երեք տարի ետքը յարութիւն կ'առնէ յանկարծ, գաղափարային վիճակի մը մէջ, նոր յղացում խորհուրդի մը ձեւին տակ։ Երանի՜ թէ գործադրութեան գրուելու պահուն պահէր նոյն բաղդաւորութիւնը։

Այս ապահովագրական հոգակաւոր բանակցութիւններէն ետքը, թերեւս կարգը գայ նաեւ մանկավարժական ոչ նուազ հաշակաւոր դասախօսութեանց որոնց համար՝ Ուսումն. Խորհուրդը՝ իր հօթնօրեայ անխախտ ու անփոփոխ համարատուութեանը մէջ շարաթ առտու մը ծանոյց պաշտօնապէս թէ յետաձգած է «յետ Զատիկական աւուրց»։

Հիմայ որ Բաղարջակերաց տօնը անցաւ, — երբ գործերնիս Ուսումն. Խորհուրդին հետ է՝ կրնանք Ս. Գրքի սճով խօսիլ քիչ մը, — վարժապետական շրջանակներու մէջ կը հարցուի թէ այդ հրապարակային խոստումը պիտի յարգուի՞, թէ ոչ՞ պարզապէս արտաքին ձեւ մըն էր անիկա՞ փրկելու կամ մոռցնել տալու համար՝ ձեռնթափ ըլլալու զղջացում յայտարարութեան gaffer, ինչպէս կը կարծուի ոչվարժապետական շրջանակներու մէջ։

Զուարթ բարեկամ մը, այս վերջին ենթադրութեանը յարելով, կ'ըսէր առջի օրը՝

— Այդ պարագային մէջ, տեղի չունենալիք բանի մը համար այսուհետեւ փոխանակ «aux calendes grecques» օտար բացատրութիւնը կամ «Ծագաւորին» տեղի բարձր գործածելու, «Զատիկէն ետքի յետաձգուած է» ըսենք։

Կը տեսնէք որ, մեր զգրոցական գործերուն հսկող մարմինը, անզգալաբար Ակադե-

միի դեր ալ կը կատարէ, խօսքի աղնուական դարձուածքներ ստեղծելով։ Ու դեռ մարդիկ կան որոնք զայն քննադատելու կը յաւակնին, միամիտները։

Ատարագար ալ իր Նուագահանդէսը կուեննայ առաջին անգամ ըլլալով, ինչ որ պըզտիկ յառաջդիմութիւն ըսել չէ գեղարուեստական ճաշակի անսահէտով։ Անցեալները, չեմ յիշեր գաւառային ո՞ր քաղաքէն նկարագրութիւն մը կար բարեգործական երեկոյթի մը որուն յայտագրին մաս կը կազմէր նաեւ ւիլիեմսօքսօքսօքս։ Չէր արժեր սակայն կանգ առնել այս նորութեան առջեւ, զոր չընուն մասնաղէտ մը՝ իր գործիներն ու ցուցադրութիւնները հետք առած՝ կը ներմուծէ հոս հոն, որոշում վարձքի մը փոխարէն։ Մինչդեռ, Ատարագարէրներուն, ճշմարիտ գոնահո մըն է, արուեստասէր երիտասարդներու կողմէ կազմակերպուած, երաժշտական տանըլեց հատուած պարունակող յայտագրով մը, իր գաշնակովն ու ջութակովը, եւ թերեւս . . . «Լիսլի 12րդ սարսօթի»ովը՝ առանց որու, Բեռլինի մէջ, Նուագահանդէս մը կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը եւ զոր, մեր երաժշտական քրոնիկալիները եթէ տարին գէթ տասն անգամ չյիշեն՝ մեղանշած կը համարին ինքզինքնին։ Ահ, այդ «Լիսլի 12րդ սարսօթի»ն, արդեօք Ատարագարէրներն ալ պիտի վարակէ օրին մէկը իր սիրովը։

Մաղթելով որ այս ախտաւարակումէն զերծ մնան, անխառն հաճոյքով մը կ'ողջունենք իրենց մաղիւնին ուր ոտքի վրայ մնացող հանդիսականներու խնդիր չի կար, եւ եթէ աւագներն ու նստարանները քիչ եկան՝ առաջնութիւնը կ'ինկուծու արուեստը նստելու։

Բան մը որուն հակառակը պատահեցաւ այստեղ, ո՛չ շատ առաջ։ Օրիորդներ ալ մասնակիցեր են այս Նուագահանդէսին որուն մօնօրի մը կը պակսէր՝ Իւնիօնի Նուագահանդէսին հաւասարելու համար։ Բայց Երիտ. Քրիստ. Ընկերակցութիւնը, որ կազմակերպած էր զայն, այդ թերին լրացուցեր է հրախրելով Ծաղկան Մինաս Էֆէնաին բանախօսութիւն մը արտասանելու, կարճ բայց սիրուն տեսութիւն մը՝ երաժշտութեան ու Նուագի ազ-

նուաջնող գերին վրայ : Որքան գո՛ն մնաց արդեօք դատարարակ—ատենախօսը ունկնդիրներու ուշադիր ու համակիր բաղմունքին մը գանկով իր առջեւ , մինչդեռ նախորդ տարին , ճիշդ այս օրերուս , Արհեստանոցի սրահին մէջ իր արտասանած դասախօսութեանը ատեն , յօրանջող վարժապետներ ու դրացնուհիին գլխարկին ծաղիկներովը զրազող վարժուհիներ կը գանէր : Մնաց որ , երիտ . Բրիտ . Ընկերակցութիւնը , նուազահանդէսէն առաջ՝ իր տարեկան բանախօսութեանը շարքը աւարտելու է կանոնաւորապէս , ինչ որ Պարտիզակի մէջ ալ տեղի ունեցաւ , կարծեմ , յատկապէս Պոլսէն հրաւիրուած բրոֆէսօրներու միջոցաւ : Ասանք բոլորը , ինչո՞ւ չխոտտովանինք , պատուաբեր են մեզի այնքան մօտ գաւառակներու համայնքներուն , բազդատմամբ մեզի՝ որ երկու տարի վրայէ վրայ կիրակնօրեայ դասախօսութեանը շարք մը շարունակելու յարատեւութեան ոգին չունեցանք :

* * *

Տօքթ . Թորգոմեան կ'առջարկէ Սուրհանդակի մէջ որ Ս . Փրկչի Հիւանդանոցին հաստատման հարկւրյիմնամեակը տօնուի յառաջիկայ օգոստոսին , քանի որ Իզմիրի Ազգ . Հիւանդանոցին հարկւրամեակը տօնելու նախապատրաստութիւններ կ'ըլլան այնտեղ : Եւ հաստատելու համար որ , Ս . Փրկչի Հիւանդանոցը թէեւ Ս . Լուսաւորչեանէն 31 տարի ետքը կ'առուցուած է , բայց անկէ շատ ու շատ տարիներ առաջ Պոլսահայերը ունեցած են իրենց հիւանդանոցը Նաւլը—Գարուի եւ Բերայի մէջ , վաւերական փաստեր ու

ծանօթութիւններ մէջ կը բերէ Սարգիս Դպիրի «Տեղեկագրութիւնէն» սկսելով մինչեւ Պէրպէրեան Աւետիս Պատուելիի յիշատակարանը : Մէկդի թողով ՌՄԽԻբու եւ ՌՅԾԱերու հաշիւը , որոնց ամէն մարդու խելքը չի հասնիր , սա յատկ կ'երեւայ բանասէր բժիշկին եզրակացութենէն , թէ Ղափանցի Գէորգ Պատրիարքին օրով , 1751ին , Հայոց անդրանիկ հիւանդանոցը կ'առուցուեր է Նաւլը—Գարուի ծովեզերքը :

Անա՛ գեղեցիկ գաղափար մը՝ բարեգործական գեղեցիկ հանդէս մը սարքելու : Այս տեսակ յորելեան մը աւելի բարոյական նշանակութիւն մը պիտի ունենայ քան նիւթակտն , եւ պիտի ըլլայ յորելեանը մարդասիրական գործին եւ մէկուկէս գարու շրջանի մը միջոցին անոր արտայայտութեան ձեւերուն ու կրած բարեփոխումներուն մեր մէջ , Բիւզանդէֆ . Քէչեան , Ս . Փ . Լիչի Պաշտօնական հեղինակը , իր այդ երկարաշունչ աշխատութեան ու մանրակրկիտ ուսումնասիրութեան մէջ , չա՛տ բան երեւան հանած է Հիւանդանոցի անցեալէն : Այս յորելեանին առթիւ յաւելուածական հրատարակութիւններ ալ կրնան ըլլալ , գէթ մամուլին միջոցաւ , ամէնքը մէկանց կ'ազմելով զրական Յիշատակարան մը Հիւանդանոցին նուիրուած , որ ամէն երկիրներու Հայերուն աչքին առջեւ պատկերացնէ այս Գթութեան Տունին ալեւոր կեանքը , զոր միշտ առոյգ պահելու համար զոհողութիւն չի ինայուիր :

Կ'արժէ որ լուրջ նկատողութեան առնուի Տօքթ . Թորգոմեանի այս չա՛տ բանաւոր առաջարկը :

Տ . Ա .

«Մասիս»ի հարցաւորը : — «Վաղուան Գրականութեան» ծանօթ հարցը , զոր նախորդ շրջանին յագեցինք այս էջերուն մէջ , կարճատեւ դադարէ մը ետքը վերարժարծուեցաւ Ռ . Յ . Պէրպէրեանի «Նկատելի կէտեր»ովը որոնք այնքան ուշադրութիւն գրաւեցին մեր գրական շրջանակներուն մէջ : Յովհ . Գալանձեանէ եւ Արտ . Յարութիւնեանէ ետքը , որոնք փութացին պատասխանել այդ յօդուածին , պատասխան մին ալ ուտացած ենք Ռուբէն Զարգարեանէ (Խարբերդէն) , զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով , որմէ ետքը պիտի փակենք այլեւս այս վիճարանութիւնը ,

միշտ բաց էջ մը պահելով , սակայն , Պէրպէրեան էֆ . ի պատասխանելու գաւառացի երեք զրազէտներուն դիտողութեանցը միանգամայն , ինչ որ կը սպասուի արդէն այս գրական խնդրին հետաքրքրութեամբ հետեւողներուն կողմէ , որոնք պզտիկ թիւ մը չեն կ'ազմեր : Այսօրուան թիւով կը շատանանք հրատարակել հակիրճ տեսութիւն մը զոր զրկած է մեզ Տ . Բարպէն վարդապետ , նոյն խնդրոյ վրայ մինչեւ ցարդ գրուածներէն բոլորովին նոր ու տարբեր հայեցակէտ մը պարզելով :

ԳԻՏԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Թուղթի դար. — Զարհուրելի բուրջը. — Կրակ. — Կիւլիլերի նամբուրդութեանն :

Թերեւս անիրաւ չէր այն իւմօրիսդը, որ մէկէ աւելի պատճառներու համար կ'առաջարկէր «Թուղթի Դար» անունը տալ հանգուցեալ 19րդ դարուն, Թուղթը, այս պատուական հիւսուածոն, զոր մենք ամէն օր կը մտտենք, արդարեւ կրնայ գործածուիլ ուրիշ տարրեր բաներու, այնքան տարրեր որ առաջին անգամ բացարձակապէս անհատապի կ'երեւայ : Թուղթէ կը շինեն շիշեր ու ամէն տեսակ անօթներ, տակաւներ, պղիւտներ, երկաթուղիներ, հեծանիւներ, զգեստներ : Հիմակ ալ ծանօթ առողջարան մը, Պ. Թ. Կիւյո, եւր կը ջատագովէ թուղթէ թաշկինակը, — խնայողական, անպատուելի, մետաքսանման թաշկինակ մը, ճոխ ու փայլուն երանգներով : Մի խնդաք : Առողջարանները երբեմն փրկարար աղցեցութիւն կ'ունենան մեր բարքերուն վրայ : Մնաց որ քիչ մը իրաւունք ալ ունի այս գիտունը, որուն խօսքը կ'արժէ մօտիկ ընել : Կ'ըսեն թէ բան մը կայ զոր ճարտնցիք չեն հասկցած, այն է թէ ինտո՞ր մենք երկու անգամ կը խրնջենք միեւնոյն թաշկինակին մէջ, Անոնք, շիտակի ըսելով, այս կէտին վրայ աւելի փափկանկատ են : Երբեք իրենց մէկ անգամ գործածած թաշկինակը գրպանին չեն դարձներ, այլ գնտիկ մը կը չինեն — բոլորք թէ անոնց գործածած թաշկինակը թուղթէ է — եւ հովին կուտան զգուշանքով : Մեր գործածած թաշկինակը, Պ. Կիւյոյի համար, բնականաբան մըն է անմաքուր սերմերու սրունք կը գտնուին բերին, քիի ու մինչեւ իսկ աչքի արտաթորումներուն մէջ : Այդ զարհուրելի քորջի կտորը, այս պայմաններուն տակ, փոխանցումի հզօր միջոց մըն է կեղծմաշկի, ծաղկափափ, թոքատապի, շառատենդի (զըզըլ հիւմմա), աչացաւի եւայլն : Բարեբախտաբար՝ պարզ, յարմար ու զիւրամատչելի

միջոց մը կայ արտաթորումները բուրբովին ջնջելու համար, այն է թուղթէ թաշկինակը, զոր այրելու է՝ առաջին գործածութենէն ետքը : Բայց դժուարը փողոցի մէջ : Ո՞ր նետելու է այդ աղետոտ թուղթերը : Միքատայի հպատակները հովին կուտան զանոնք, բայց Եւրոպայի մէջ ատանիկ բան մը պիտի թոյլատրուէ՞ր : Ամէն մարդ իր վրայ հաւանեխուած տո՛ւփ մը կրելու է, գործածուած «Թուղթերն» հոն պահելու համար կամ թէ թողապետութիւնները նոր տեսակ պահարաններ հաստատուելու են փողոցներուն մէջ : Ո՞րքան փափուկ խնդիրներ : «Միկրոթի արհաւիրք»ը հետզհետէ կը սպառնայ շփոթութիւն ձգել անհատական սովորութիւններու մէջ, որքան ալ պարզ, անմեղ ու արմատացած ըլլան աւանք : Անշուշտ օր մըն ալ պիտի պարտաւորուինք բնակարանները թուղթէ շինելու, որպէսզի կարելի ըլլայ զիւրաւ այրել ի հորկին, զի ապացուցուած է թէ ամէնէն խնամեալ ապանեխումներն իսկ անբաւական են միկրոթները հիմնովին ջնջելու :

Տերբեմն չառ տարօրինակ զուգադիպութիւններ կան : Լոնտոնի Ուօրհաւուզմէն հնճ Տրարըր թերթին մէջ արտատպուած է Կիւլիլերի ճամբորդութենէն, Սուլիֆաի այս անմահ երգիծանութենէն հատուած մը, որ սապէս կը սկսի. — «Երբ Կիւլիլեր Լարիւրայի մեծ ահողեմին այցելեց, տեսաւ որ սրահը ամբողջովին զարդարուած էր սարդի ոտայններով : Ուղեւորին բնկերացող բրօքէտորը, այս նորօրինակ կահաւարումին առթիւ սկսաւ սղբալ «այն աղետալի սիտալը, որուն մէջ ինկած են մարդիկ՝ շերտով գործածելով, երբ իրենց շուրջը ունին մեծ քանակութեամբ բնտանի միջատներ, անհունապէս զերտաւանգ, զի ո՛չ միայն թիւ կը չինեն, այլ կը հիւսեն ալ» : Հետեւապէս, բրօքէտորը կ'առաջարկէր յեղաշրջել մետաքսի ճարտարարուեստը՝ չե-

բամի տեղ սարգ զործածելով : Կը յուսար
նեղի կողմէ այ խնայութիւն ընել , ամէն
դոյնէ գեղեցիկ ճանճեր հաւաքելով եւ սար-
դերուն կերցնելով : Այսպէս , կարելի պիտի
ըլլար մետաքսի թել ստանալ ուզուած գոյ-
նով : Ժամանակը , գէթ մասամբ , իրաւունք
կուտայ այս ծագարանութեան : Վերջին դա-
րու առաջին տարիներուն մէջ Սուրբօրի այն
քան սրամտութեամբ հեգնած ծրագիրը լուրջ
ուշադրութիւն կը գրաւէ ներկայ դարուն մէջ ,
թէեւ այժմէն կարելի չէ գուշակել թէ ինչ

տեսերական տալագայ վերապահուած
է սարգի մետաքսին : Ամէն պարագայի մէջ ,
հարկ է ըսել թէ Մատակաւորարի սարգը , ո-
րուն վրայ փորձեր կը կատարուին , մեք դաշ-
տերու եւ տուներու սարգերէն շատ տարբեր
միջատ մըն է : Մալկաշ սարգը շատ ամուր
թել մը կուտայ :

Զուգադիպութիւնը հետաքրքրական է եւ
անգամ մըն ալ կ'ապացուցանէ այն ճշմար-
տութիւնը թէ արեւին տակ նոր բոն չկայ :

Ֆ.

ՄԱՍԻՈՒԻ ՅՈՒՇԱՏԵՏԻՐԸ

Ս. Պատրիարք Հայրը , իր հետն ունենա-
լով Բ. գործակատար Դաւադրեան Թարու-
թիւն էֆէնտին , կիրակի օրը Կայս. Պալատ
դնայ Մուհարրէմի շնորհաբոլութեան :

Իզմիրեանց Գրական Մրցանակի Յանձ-
նածուղով , որ բաւական ատենէ ի վեր նիստ
ըրած չէր , չորեքշաբթի առտու գումարուե-
ցաւ Ս. Պատրիարք Հօր բնակարանին մէջ ,
ն. Սրբազնութեան նախագահութեամբ , եւ
մասնաւորապէս զրազեցաւ ներկայացուած
երկասիրութիւններուն նախաքննութեամբը ,
անոնցմէ յարմարագոյն դատուածները ձեռն-
հաս քննիչներու դատաստանին յանձնելով ,
իսկ բոլորովին անյարմար դատուածները
մէկդի դնելով : Կը ըսենք թէ Յանձնածուղով
հարկ տեսած է բարեփոխել այս գրական
միջման համար մինչեւ ցարգ բնդունուած
պայմանները , եւ նոր կանոնագիր մը պատ-
րաստած է որ Ազգ. Վարչութեան վաւերաց-
մանը պիտի մատուցուի : Անշուշտ , երբ
կարգը գայ , հրատարակութեան ալ կը
տրուի :

Դուրեան Մրբազան , Արմաշի բարեջան
փոխ-վանահայրը , որ չարաթէ մը հետէ
մայրաքաղաքս կը գտնուի , հանգիստ առ-
նելու միջոց չի գտներ , մասնակցելով Արմաշի
Խնամակալութեան , Իզմիրեանց Յանձնաժո-
ղովին եւ Կրօն. Ժողովի նիստերուն , ու գրա-
ղելով Դպրեվանքի վերաբերեալ կարգ մը
գործերով որոնց կարգադրութեանը հա-

մար եկած է : Կրօն. Ժողովը արտօնեց Դուր-
եան Սրբազանը որ Հոգեգալտեան տօնին
օրը Զարիստիանի տաճարին մէջ արեւոյ
ձեռնադրէ Դպրեվանքի տար սարկաւազները
որոնք աւարտած են իրենց ուսման շրջանը :
Այս արարողութիւնը տարակոյտ չկայ որ շար-
ժառիթ ըլլայ՝ մայիսի ուխտագնացութիւնը
սովորականէն աւելի ուխտաւորներու բազ-
մութեամբ կատարուելու :

Ս. Հայրապետը՝ օրհնութեան կոնդակնե-
լով մէյ մէկ սկեզած լանջախաչ դրկած է Տ.
Սուքիաս վարդապետ Պարոնեանի եւ Բարիդի
Հայրց երէց Տ. Վասիլապուհ քահանային :

Հիւանդանոցի մատրան շինութիւնը պիտի
սկսի մօտ օրէն , Միքայէլ էֆ. Յակոբեանի
ծախքով : Ս. Պատրիարքը եւ Յակոբեան էֆ.
անցեալ շաբաթ օր Հիւանդանոցը այցելելով՝
սրտչեցին որ նոր մատուցը կառուցուի Կիւլ-
պէնկեանց դամբարանին ձախ կողմը :

Պատրիարքարանի Ա. գործակատար Տիգ-
րան էֆ. Տէր-Ներսէսեան Երուսաղէմ ուխտի
երթալուն առթիւ , Մէրսին այցելելու եւ եր-
կար տեսակցութիւն մը ունեցելու է կառավար-
չին հետ : Տէր-Ներսէսեան էֆ. տեսակցու-
թիւններ ունեցելու է նաեւ տեղւոյն առաջնա-
կարգ օգոյցայիններուն հետ :

Պատրիարքարանի «Աւուծ եւ Արեւ» պատ-
ուանչանի Գ. աստիճանը շնորհած է մայրա-
քաղաքիս պարսկական գեսապանտան բժիշկ
Տոքթ. Սամուէլ էֆ. Լապճընճեանի :

Մանգուսի Էֆենար քաղաքը, որուն արտոնութիւնը՝ բարձրագոյն հրամանով՝ մոխնացում էր Յովհաննէս Էֆ. Գոյսէրեանի անուան, այս շորեքշորքի օրուքնէ սկսաւ հրատարակուիլ նոր ձեւով, իրրեւ օրաթերթի առաւօտեան, մէկ մասը հայերէն յօդուածներով եւ միւս մասը հայատառ եւ թրքաբարբառ։ Կը շնորհաւորենք Գոյսէրեան Յովհաննէս Էֆ. ի լրագրական այս ձեւնարկութիւնը, յաջողութիւն եւ յարստութիւն մաղթելով։

Ասեփան Ոսկանի յիշատակին, — որուն կեանքին ու գրում քներուն նուիրուած գեղեցիկ յօդուած մը կը հրատարակենք այսօրուան թիւով, — հոգեհանգստեան պաշտօն կատարուեր է Իզմիրի մէջ, Տ. Մելքիսեղէկ Սրբազանի նախադաշնութեամբ։ Յատկապէս կազմուած Յանձնաժողով մը հանգանակութեան ձեւնարկած է որուն արդիւնքով շիրթի մը պիտի կառուցուի ողբացեալ հրապարակագրին գերեզմանին վրայ եւ անոր թաղած անտիպ ձեռագիրները պիտի հրատարակուին առանձին հատորով մը։

Փոքրիկ Հայ գաղթականութիւն մը կալ մուած է ի Տար-իւս-Սալամ, զիստոր կեդրոն Արեւելեան Ափրիկէի գերման գաղթավայրին, Զանգիպարի գիմացը։ Հայ գաղթականաց մէկ մասը եգիպտոսէն, մէկ մասն ալ Հնդկաստանէն գացած են Պոմպայի ճամբով։ Հաճի Գասրմի շրջնաւայրին բնկերութիւնը կանոնաւոր գիծ մը ունի բնդ մէջ Պոմպայի եւ Զանգիպարի, եւ շատ մը Բարսիներու եւ Հնդկիներու հետ մէկ քանի հայ վաճառականներ ալ շահակից են նոյն բնկերութեան։

(Բիզանդիոն)

ԷՆՏՐԻՈՒ ՔԱՐՆԷԿԻ

Անցեալ տարի Մալիս իր ընթերցողներուն ծանօթացուց Ամերիկայի նշանաւոր հարուստներէն մէկը, Էնտրիու Քարնէկի, որուն 40 միլիոն լիրաներուն պատմութիւնը հեշտ երազներով օրօրեց շատերուն միտքը բաւական ատեն։

Ընթերցողները կը յիշեն անշուշտ թէ Մըս-

թըր Քարնէկի մասհագութիւնը ուղիղ համեմատութեամբ աճած էր իր սակիւնքով ինչեւ. եւ այս նոր կրեւորը շտաբած մնացած էր չզիտեալով թէ ինչ կերպով կրնայ օգտակարապէս գործածել իր հարստութիւնը՝ հանրային բարիքին համար։ Եւ ահա, վերջին տտեններս, իր հսկայ հարստութենէն մաս մըն ալ կու գայ յատկացնել Նիւ-Եօրք քաղաքին պայծառութեան, որուն համար 5,200,000 առարի կամ օտանեան դրամով գրեթէ 1,200,000 լիրայի պատկառելի գումար մը կը նուիրէ։ Այս գումարով պիտի հիմնուին 65 մատենագարաններ, որոնց իւրաքանչիւրին համար 80,000 առար կամ 18,600 սակի բաւական տեսնուած է։ Մատենագարաններուն հիմնուելիք տեղերը պիտի նուիրուին հարուստ մարդոց, եւ Մըսթրի Քարնէկի ու եւ առարիսթիւն չպիտի կրնայ բնեւ կատարեալ մատենագարանական դրութիւն մը ունենալու համար բլլալիք այս տեսակ նուէրներու։ Արդէն բաւական թիւով հարուստներու կողմէ մատուցումներ եղած են մատերագարանի յատուկ գեաթներ նուիրելու մասին եւ անտարակոյս Մըսթրի Քարնէկի ցոյց տուածին պէս առատաձեւութիւն մը պիտի գրդէ դեռ ուրիշ հարուստներ, որպէս զի իրենց սակիներէն մաս մը յատկացնեն քաղաքին օգտին։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մ. ՌԱՅԱՅԷԼԵԱՆ (ՏՐԱՊԻԶՈՆ) — Ստացածք Զեր ապրիլ 7 ամսաթիւ նամակը օրով կը յայտնէք թէ Մալիսի 13րդ թիւը ձեռքէ ձեռք խլեր են քաղաքի հայ սակիւններն ու օրիորդները, կարգապէս համար Օր. Յոյնէի Ինչո՞ւ կուզեմ ամուսին բանաստեղծութիւնը, նախապէս նոյն հետաքրքրութեամբ կարգացած բլլալով Թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար մենախօսութ, ւեր։ Ենտրհակալութիւն Մալիսի պարտնակութեանը եւ ուղղութեանը նկատմամբ Տրապիզոնի ազգայիններուն կողմէ արտայայտուած զեռհամաձայն ու համակրանքի զգացումներուն համար որոնց արձագանքը կը հաղորդէք խմբագրութեանս։ Զեր նամակը Օր. Յոյնէի յանձնելիք . . . Աղեքս. Փանոսեանի միջոցաւ։

ԱրՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԷՆՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսերու եօզուշու, Թիւ 27

Թ Ղ Թ Ա Վ Ա Ճ Ա Ռ

Վ. ԵՒ Հ. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Պոլիս, Սուլթան-Համամ, բաղնիքին կից թիւ 18

Տէր-Ներսէսեան Թղթաժառանգութեան՝ իր նախկին տեղը վերահաստատուած՝ զրա-
մատանց, վաճառատանց, գրասենեակի եւ գպրոցներու վերաբերեալ ճոխ ու ընտիր ապ-
րանքներ բերել տուած է։ Գլխաւորաբար հոգ կը տանի ճապարակեան (փոխանակագիր,
չրջաբերական, քարթ ար վիզիթ, հարսանեաց հրաւիրագիր եւ չն եւ չն) եւ կազմի վերա-
բերեալ գործերու, եւ կը ստանձնէ այս կարգի ամէն յանձնարարութիւններ զորս կը կա-
տարէ փութով, խնամով եւ խիստ դիւրամառչելի պայմաններով։

Ամէն անոնք որ հաճին անգամ մը պատուել Տէր-Ներսէսեան վաճառատունը՝ մեծա-
պէս գոհ պիտի մնան ապրանքներու ճոխութենէն ու ընտիր հանգամանքներէն, մանաւանդ
յանձնարարութեանց փութով կատարու մէն եւ այն ուղղամտութենէն որ վաճառատան կէտ
նպատակն է։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնները փութով կը կատարուին։

9—10

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւիաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմնի խան, Կ. Պոլիս։

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏԲԹ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ — ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396, ՄԵՍ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ, 396

(Եաննի գարեջրատան վրայի յարկը, ճիշդ Զրպուհեանց դիմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենաստատիկ ցաւած աղաները մեկ ան-
գամ կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ։

Նորահար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական աղաներ կը
պատրաստեն, յար եւ նման բնականի, դիմի մեղաւորութիւն ըստ տարիքի, ծանոթութիւն
եւ ազատ արտասանութիւն երաշխաւորուած։

Իերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ գեղե-
րու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն։

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (միւսչեւ կիս օր) ինչպէս նաեւ ամէն օր (միւսչեւ
կիս գիշեր) հիւանդ կ'ընդունին։

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաձիւղ ԶՈՒՆԻՆՔ.

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրգ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրգ., կանխիկ վճարելի : Արժասանման 12 Գրանք կամ 5 բուլլի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը զսնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաքիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Ոսկեղէն

ԲԱՆԱԼԻ ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Քերական, Ընթերցարան, Քերականութիւն, Բառագիտութիւն, Ասուգարանութիւն, Շարադրութիւն եւ Խնասկցութիւն

Երկար տարիներէ ի վեր Անգլիերէն լեզուն սովորելու համար մեր գործածած միակ դասագիրքն է այս որ մեծ խնամով սրբագրուած եւ մէկ հատորի մէջ ամփոփուած հրապարակ ելած է մաքուր տպագրութեամբ եւ գեղեցիկ ձևի մը տակ :

ԳԻՆ 15 ՂՐՇ.

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով, — Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Թիւ 27, Ֆինճանճըլար Եօգուչու, Կ. Պոլսոյ :



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա.ՊԱՂԱՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765 333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնատեղի, Ղալաքիոյ ֆառափին վրայ, Մաքսան հին տեղը
Ընդհ. Գննիչ **Ընդհ. Դործակալ**
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ **ԹԷՈՏՈՐ ՌԷՅԵՆ**